

ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԱՅԻՍ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 բուլբուլի կէս տարվանը 6 բուլբուլի
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խմբագրանշիւր տողատողին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ԲՈՎԱՆԴԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Պարբերական մամուլը.—Ներքին ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Բազուկի իրականութիւնից. Թատրոն
և երաժշտութիւն. Նամակ Հին-Նախնականից.
Նամակ Շուրուց. Ներքին լուրեր.—ՆԵՐՔԻՆԻՐ-
ՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻ-
ՐԱԿԱՆ. Լէմանի փոփոխութիւն:

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ

Սյոժի, երբ յոյս կայ, որ շուտով զգալի
կերպով կը թեթևացվեն մամուլի գոյու-
թեան պայմանները և ճշտացած կը
լինեն նոր թերթեր հիմնուած ձևական
պահանջները, անկասկած, մեր երկրում
կաւելանայ մամուլի օրգանների թիւը:
Հիմք կայ կարծիք, որ առաջիկայ աշ-
նանից և նոր տարուց մենք կունենանք
մի քանի նոր պարբերական հրատարա-
կութիւններ հայերէն լեզուով:

Մենք սրտի խորքից ողջունում ենք
մամուլի զարգացման համար բացվող այդ
գարունը և կը ցանկանայինք, որ հրա-
պարստեան խօսքի համար լայն բացված
լինէր յորժանեութեան ճանապարհը մեր
երկրի մէջ:

Եթէ պարբերական խօսքը հասարա-
կական մտածողութեան արտայայտու-
թիւնն է, անշուշտ կարևոր է, որ այդ
արտայայտութեան համար մեծ լինէր առ-
պարէզը, որպէս զի հասարակական հո-
սանքները կարողանային հրապարակական
քննադատութեան և ուսումնասիրութեան
առարկայ լինել, հարթելով ուղիներ
մտաւոր և բարոյական առաջադիմու-
թեան համար: Մենք չենք խօսում այլ
ևս այն մեծ գործի մասին, որ կատա-
րում է պարբերական խօսքը, իբրև գա-
ղափարների քարոզիչ և գիտութիւններ
ժողովրդականացնող մի գործօն:

Եւ մենք միայն մի բարոյական պա-
հանջ ունենք յայտնելու, որ նոր թերթե-
րի ձեռնարկողները լուրջ նայեն իրանց
ձեռնարկութեան վրայ, որոշակի ու գի-
տակցաբար զննեն այն հաստատիւները, ո-
րոնց ձգտում են նրանք իրանց թերթե-
րով և ամեն ջանք գործ զննել վայր չը
զցելու այն սուրբ գործի անունը, որ
հրապարակական խօսք անունն է կրում:
Եթէ, օրինակ, նոր թերթը պէտք է հան-
դէս դաշ նեղ, անձնական և փառասիրա-
կան շահեր առաջ տանելու համար, եթէ
նա պէտք է ծուռ ճանապարհներով որ-
սայ բաժանորդներ իր համար, եթէ նա
պէտք է շողորդութիւններով և ստո-
րութիւններով պղտորէ մարդկանց մտքե-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԼԵՄԱՆԻ ԱՓԵՐԻՑ

I
Գուռ, մեծաշուք հանդէսներ ամբողջ արեւ-
մտեան աշխարհում: Ժողովրդական ընդհանուր
ցնծութիւն, խանդավառ ձառեր ու որոտում
կեցողներ՝ Վայմարից մինչև Նիւ-Եօրկ ու
Վաշինգտոն, Կարպատներից մինչև Լէմանի
ափերը: Մի վայրկեան սուսնում էր խաւար
Արեւելքը իր բոլոր սկերով ու սարսափներով,
մի վայրկեան խախտում է հայրենիքից հնչող
մարդկային ձայնը: Վայրենի աղաղակը, գա-
ղանացած խուռանքի հռչակներն ու հաւաքը...
Այստեղ Արեւմուտքում տօն է մարդկայնութեան,
տօն է արեւելքական համերաշխութեան և եղ-
բայրութեան...

Շիլլէրի մահվան հարիւրամեակն է:
Երգվում է անկախ ու անաղարտ հանճարը,
երգվում է վսեմ գաղափարների երգիչը:
Գերմանիան, հպարտ իր ազգային բանա-
ստեղծով, կազմակերպում է մեծադուրդ ցոյ-
ցեր, ուր ուսանող երիտասարդութեան հետ
կենդանի մասնակցութիւն ունեն հասարակու-

րը և զրպարտութիւններով աշխատէ ա-
ռաջ տանել իր գործը, այն ժամանակ
նա կատարած կը լինի մի յանցանք, որը
անշուշտ վաղ թէ ուշ իր արժանի գնա-
հատութիւնը և պատիժը կը ստանայ,
բայց ժամանակաւոր կերպով կարող է
մոլորեցնել և գայթակղեցնել մարդկանց
մտքերը:

Թող ասպարէզ գայ հրապարակական
խօսքը բազմաթիւ արտայայտիչներ ըն-
րանով, բայց այդ արտայայտիչները պար-
տաւոր են սրբութեամբ վերաբերվել այն
պատկառելի գործին, որին վերապահված
է վերանորոգչական և ստեղծագործական
դեր մեր հասարակական կեանքում:

Ազնիւ, անձնուէր, բանիմաց գործող-
ները թող առաջ դան իրանց խելով և
տաղանդներով: Մենք նրանց կողմնակից
բոլոր սրտից:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱԳՈՒԻ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Բնակարանային հարցը
Գործարանական քաղաքների խորթ գաւակ-
ներից մէկը:

Եւ ինչպէս մէկը այդպիսիներից,—գաղա-
պարտութեամբ մեծադուրդ քաղաքներին յատուկ
բազմաթիւ խորթութիւններ ըլլոր հրաշալիք-
ներից:

Եւրօպական իրականութեան համար բնա-
կարանային հարցը անելով հասկացվում է մի
որոշ, յայտնի խնդիր, որը ունի իր ընդարձակ
գրգռանքները, իր պատմութիւնը և իր
էվօլյուցիան: Այդ հարցը այնտեղ, գործարա-
նական և արդիւնաբերական վայրերում, խիտ
բնակեցրված քաղաքներում այլ ևս «ֆուրօր
հանող» խնդիրներ չեն պատկանում:
Նա կամաց-կամաց, բայց որոշ սխտանով
սկսվում և առաջ է գնում: Այլ է մեզնում:

Բնակարանային հարցը մեզնում միմիայն
հառաչանքներ, ախր ու վախեր է առաջա-
նում: Վերջը բարե ցանկութիւններ՝ երբեք
չիրագործվելու պայմաններում բարեբաւ:

Իսկ հարցը այնպիսիներից չէ, որ կարելի
լինի աչքաթող անել:
Ասելի ճիշդը—ժամանակը այն ժամանակ-
ներից չէ, երբ բանտերի տանելի բնակարան
ունենալու միտքը, ցանկութիւնը վայրենի
բերել էր միայն առաջացնում: Փոխվել են
ժամանակները:

Այս թէ ինչու, երբ մայիսի 5-ին բժշկա-
կան ժողովում Պ. Յ. Ալեքեան կարգաւ իր
գեկուցումը Սև քաղաքի բանտերների բնակա-

թեան բոլոր դասակարգերը: Բայց Շիլլեր
չէ պատկանում միմիայն Գերմանիային, ամ-
բող լուսաւոր մարդկութիւնն է նրան տօ-
նողը:

Նայեցէ՛ք փոքրիկ Հելվեթիային. ուրպիսի
փութկոտութեամբ և որպիսի անխառն բերկ-
րանքով նա ժողովներ ու հանդէսներ է սար-
քում «Վերլէյմ Տէլ»-ի մեծանուն հեղինակին
պատուելու համար: Հելվեթիան իր ժամանակ
պատճառներն ունի որպիսի ժողովուրդ Շիլլերի յի-
շատակով: Դիւցազնական—թէկուզ և առաջա-
կան—Տէլի հայրենակիցները իրանց հարա-
գատն են համարում Շիլլերին, իրանց ազգա-
յին մեծ բանաստեղծը: Ազգային բանաստեղծ
գարծել է նա Շիլլեցարիայի համար իր գրչի
մէջ միայնակ արդարութեամբ, իր հոգեկա-
ւոր «Վերլէյմ Տէլ»-ով:

Այդտեղ, այդ հոյակապ, ռամկավարական
գրամայի մէջ լոյս է հանված անցալի խա-
ւարից շիլլեցարական պատմութեան ամենա-
չքնաղ հատուածը, այդտեղ պատմված են մի
բուռն ժողովրդի հերոսական ճիգերը՝ թօթա-
փելու օտար բռնաւորի լուծը, այդտեղ իղէա-
կական մի գերագոյն ներշնչումով, յուզիչ տո-
ղերի մէջ պատկերացրված է շիլլեցարական
գեղանի բնութեան ու դիւցազնիւրդութեան
հետ՝ լեռնական ժողովրդի վառ, ստեղծագոր-

րանքների մասին,—ամենից առաջ հրապարակ
եկաւ գործնական իրականացման խնդիրը:

Սև քաղաքի անհիտարակաւ հողաբարձու-
թիւնը, նպատակ ունենալով լուսաւորանել այդ
խնդիրը, որոշել է ցուցակագրել մի շարք
բնակարաններ՝ յայտնի ծրագրով—բնակիչ-
ների թիւը, լուսաւորանքի բնակութիւնը,
օդի չափը և այլն: Արդիւնքը, ինչ խօսք,
ստացվել է խայտառակ. բնակարանների մե-
ծագոյն մասը ոչ մի բաւարարութիւն չեն
տալիս անհիտարակաւ, առողջապահական ա-
մենատարրական պահանջներին: Խոնաւ, մու-
թը, ցածր, նեղ, կեղտոտ, վարակված օդ,
ապականված բակ, կեղտոտված միջոցող:
Խողաքներ: Աստուծու կերպարանք ունեցող,
բայց Աստուծուց մոռացված մարդկանց համար:

Յոյ մարդիկ չեն պատկանում այն կամ
այն ֆիլմայի մշտական ծառայողների թիւին:
Բայց և նրանք միևնոյն ժամանակ պատկա-
նում են բոլոր ֆիլմաներին. բանում են օրով
մի քանի օր այստեղ, մի քանի օր այնտեղ,
մի ամիս երբորդ տեղում, ապա նորից մի
քանի օր առաջինի մօտ և այլն, այդպէս ան-
վերջ: Դրանք են. ներկայարարներ, առաջա-
գործներ, վաճառան շինողներ, տակաւագործ-
ներ, թիթեղագործներ, և բազմաթիւ բանուոր-
ներ՝ անորոշ պաշտօնատեղիով, նոյնպէս անո-
րոշ ապագայով և վարձատրութեամբ: Դրան-
ցից յետոյ գալիս են այն արհեստավորները
և բանուորները, որոնք ամսվայ մէջ հազիւ
4—5 օր աշխատանք են գտնում՝ մնացած
25—26 օրը քաղցած մնալու համար... Ապա
գալիս են այն ընտանիքները, որոնց բոլոր
անդամները in corpore գտնվում են փոսերից
նախ՝ ժողովելով և ծախելով: Նրանք էլ
Gnawing (կնքողներ) են...

Իրականութեան ինչ վայրենի, բերդ կատակ:
Այս այդ շարքերի բնակութեան տեղերին
են բնակարան անունը տուել և այդտեղից է
ծագում բնակարանային հարցը:

Ո՞վ պիտի նրանց մասին հոգայ:
Ձեկուցանողը կարծում է, որ պիտի հոգան.
Նախ՝ քաղաքային ինքնակառավարութիւնը (Սև
քաղաքի հողերը քաղաքին են պատկանում),
ապա նախարարութեան խորհուրդը:
Աւելի մեծ յոյս է գնում նա առաջինի վրա:

Որովհետև այդպէս է Եւրօպայում:
Մոռանալով, որ Եւրօպայում այնպէս չէ,
ինչպէս մեզնում: Այնտեղ քաղաքային ինքնա-
կառավարութիւնները ուրիշ կազմ ունեն, մեղա-
նում եղած կազմից շատ տարբերով: Այն-
տեղ, այդ կազմի մէջ մտնում են հասա-
րակութեան բոլոր խաւերի ներկայացուցիչ-
ներ, իսկ մեզնում...

Եւ զարմանալի է միթէ, որ Եւրօպայում
այդպիսի խնդիրներ յարուցանելը և նրանցով

ծող հայրենասիրութիւնը և ազգային անկա-
խութեան նախաձեռնողութիւնը:

Ամբողջ սերունդներ են կրթվել «Վերլէյմ
Տէլ»-ով—հարիւր տարի շարունակ Շիլլերի
գործը, որպէս հայրենասիրական իղէալիզմի
մի անապատ աղբիւր, մոռնալ է տուել շիլլե-
ցարացիների ազգային հմայքին ու հպարտու-
թեան: Այսօր նա խաղացվում է Շիլլեցարիայի
մանկային գիւղերի մէջ անգամ, հմուտ ու
վարժ դերասանների ձեռքով, հազարաւոր
խանդավառ հանդիսականների առաջ, այսօր
նրա ընթերցումով է, որ Շիլլեցարիայի նախ-
նական դպրոցներում արժարժում են մանուկ-
ների մէջ առաջին սէրը դէպի հայրենիք և
դէպի ազատութիւն:

Այդ սէրը ունի բերկաւորաբան լրացուցիչ՝
կուռ գաղափարը, որ բանում է բանաստեղծի
ամբողջ էութիւնը, որ խնկարկվում է նրա
բազմատեսակ երկերի մէջ, որպէս մի գերա-
զոյն պաշտամունք:

«Աշխուժ կեանքն է ինձ հաճելի, մաքառում,
Եւ տառաւում, թափահարում յաւիտեան
Երջանկութեան ալիքի մէջ ինչեղ,
Առանց կուռ մարդ ընկնում է, փճանում,
Մեղի հանգիստը գերեզմանն է քաջութեան»:
«Մինչ կուռ ուժին ծնունդ է տալիս,

զբաղվել սովորական և անհրաժեշտ պայման-
ներից մէկն է:

Եւ զարմանալի է միթէ, որ մեզնում ոչ մի
քաղաքային ինքնակառավարութիւն մատը մատին
չէ խփում՝ այդպիսի խնդիրներ ծնեցնելու
համար:

Մասնաւոր Բագուի հոգեկաւոր քաղաքա-
յին ինքնակառավարութիւնը, որը մի անգամ չէ,
որ ցոյց է տուել և շարունակում է ցոյց տալ
իր խայտառակ և աշխուժակ պատկերը:

Եւ ահա թէ ինչու ժողովը խաչ դրեց խնդ-
րի այդ կողմի վրա:

Նշաւ մի ուրիշ առաջարկութիւն՝ բժշկական
ընկերութիւնից մի մասնախումբ ընտրել, որը
մշակէ այդ խնդիրը և գործի գլուխ կանգնէ՝
իրականացնելու համար:

Կար և զեկուցանողի մի ուրիշ առաջարկը—
նախարարութեան քննարկների խորհրդից սպասել
խնդրի լուծումը:

Ժողովը որոշեց մի մասնախումբ ընտրել, որ
այդ խնդիրը մանրամասն մշակէ մինչև մայիսի
28-ը, երբ սկսվելու են նախարարութեան քննար-
կների արտակարգ համագումարի նիստերը
և քննել նիստերից մէկում:

Ռ. Յովհաննիսեանց

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

(Եւրօպայի խմբի ներկայացումները.—Ներկայացում
Ալեքսանդր Գոլով.—Աղայիանի ներկայացումը հաւա-
լաբարում)

I
Դերասանուհի Եւրօպայի ներկայացումները
վերջացան և նա ուղևորվեց դէպի Բաթում
այնտեղից դէպի արտասահման ուղևորվելու
նպատակով: Արտասահմանում նա պէտք է
ներկայացումներ տալ Պրագայում, Դրեզդենում
և ուրիշ քաղաքներում:

Այս տարվայ ընդհանուր մէջ մեծ մա-
սամբ ընտրված էին այնպիսի պիեսներ, ո-
րոնց մէջ Եւրօպայիան հնարաւորութիւն
ունէր արտայայտել անհատի ազատութիւնը,
մարդկային անձի և նրա մտքի ու զգացմունք-
ների և անհոգաբարիւրութիւնը: Եւրօպայիայ
այս տարի բոլորովը և մարտնչողի բնաւորու-
թիւն էր տուել իր կատարած դերերին:

Ներկայացումները զբաւում էին ընդհանրա-
պէս մեծ բազմութիւն, շնորհիւ ինչ լաւ կա-
տարման և թէ պիեսների մեծագոյն մասի հե-
տաբերութեան:

II
Ալեքսանդր Գոլովը երկուշաբթի, մայիսի
9-ին, դերասան Արմէնեան և տիկին Դուրեան-
Արմէնեան, սերողները մասնակցութեամբ, ժո-
ղովրդական տան դահլիճում ներկայացրին
Չուդերմանի «Փրիցկան» դրաման, 1 գործ.,

Ամեն ինչ վեր, դէպի վսեմ է մղում
Եւ մինչև իսկ վախկոտներին սիրտ տալիս:
Երկու փոխադարձ լրացուցիչները—հայրե-
նիքի սէրը և կուռ գաղափարը—միասնում են
մի սքանչելի սինթեզի մէջ, հետեւալ խորխոր
տողերով:

«Երբ հարստահարվածն այստեղ աշխարհում
Դատ ու իրաւունք բնաւ չէ գտնում,
Երբ որ բնութեան լուծը գարշելի
Դառնում է ստրկին անհանդուրժելի,
Նա իր ձեռքերը երկինք է մեկնում
Եւ վստահօրէն այնտեղից խլում
Իր իրաւունքներն յաւիտեանական,
Որոնք երկինքի աստղերի նման
Անշարժ, անվախճան անհունին փարած՝
Մնում են այնտեղ յաւիտեան կախված:
Բնութեան նախնի վրձակն է համարում,
Երբ մարդը մարդուն ոտիս էր դառնում,
Երբ էլ ճար չուճիւր, սրին ենք դիմում,
Մենք մեր հայրենի հողն ենք պաշտպանում,
Ընդդէմ մեղ ճնշող անարդ ընտելութեան
Պաշտպանում ենք մեր կին ու երեխան»:

Այդտեղ է, անշուշտ, Շիլլերի ահագին ժո-
ղովրդականութեան գաղափարը, իբրև բանաս-
տեղծի, իբրև դրամատուրգի: Ժողովուրդը սի-
րում է ըմբոստ հանճարներին: Եւ քանի որ
կուռ, ըմբոստացումը գաղափարը այսօր տա-

12 բուրձի: Բաժանորդագրութիւն ընդունվում է մինչև յունիսի 1-ը:

Մեզ հաղորդում են, որ ներկայ դարունը ընդհանրապէս նպաստաւոր է գիւղատնտեսութեան համար: Մայիս ամիսը, ուրիշ տարիների հետ համեմատած, ընդհանրապէս աւելի բարեխառն է: Եթէ կարկուտները տեղի չունենան, ցանքերը և այգիները կարող կը լինեն յուսալ լաւ ապագայի: Լեռնային տեղերում փոքր ինչ թոյլ է մարգերի և արօտների բուսականութիւնը:

Բագուից հեռագրում են «Königsb. Nart. Zeitung» լրագրին, որ ոստիկանութիւնը կալանաւորեց մի քանի յեղափոխականներ: Երկաթուղու վրա յարբուսիս են գրաված տասնութ գաղտնի տպարանի համար: Ձերբակալված են նոյնպէս կապածիլի անձինք, որոնք համոզում էին զինուորներին փախչել և առկրանց գնացնել ազդեցութեանը:

Ստացանք՝ 1) Սուրբ Խաչից Ներսէս քահանայ Կալաբէկեանի միջոցով հաւաքած 72 ր. 50 կ., 2) Նոր-Բայազէթից օր. Մկրտումեանի, Ս. Լալայեանի և ուսուցչի չ. Տէր-Միքայէլեանի միջոցով հաւաքած 53 ր. 10 կ., 3) Բաթումից Մանթաշեանի և ընկերութեան I գործարան, 2-րդ փայտ սղոցելու բաժանմունքի աշխատակողներէ 53 ր., 4) Բաթումից Լ. Մատուրեանի և Կ. Ոսկանեանի ձեռքով Մանթաշեանի գործարանի 3-րդ բաղնիքի հայ բանուորներից 74 ր. 50 կ., 5) Լոռու հայ Գեառգեալ գիւղի հասարակութիւնից Ներսէս Տէր-Մովսէսեանի ձեռքով հաւաքած 20 ր., 6) Ռաշտի մի խումբ օրորողներից Ս. Գրիգորեանի ձեռքով հաւաքած (170 դան) 26 ր. 69 կ., 7) Ա. Արքանաւանի միջոցով Թէրաշից հաւաքած (262 դր. 9 շահի) 38 ր. 90 կ., 8) Ցարեցիներից Ս. Տօմայեանի ձեռքով հաւաքած 25 ր., 9) Բարսում գիւղից (Գանձակի գաւառ) Ս. Աղաջանեանի ձեռքով հաւաքած 30 ր., 10) Լօզանի հայ ուսանողութեան կողմից Ս. Զաղէթեանի միջոցով հաւաքած 18 ր. 75 կ.: Ընդհանուր գումարը, նախկին ստացածների հետ միասին 29,102 ր. 64 կօպէկ:

Մայիսի 10-ից Թիֆլիսի զեղատներում գործադուլ արին զեղարարների օգնականները և աշակերտները: Դեղատները տեղերը մի քանի գիւղումներ են արել, բայց աշխատողները չեն համաձայնվեցին այդ պայմաններին և թողին իրանց աշխատանքը, որպէս զի դրանով հարկադրեն տեղերին ընդունել իրանց բոլոր պահանջները:

Գործադուլների հերթը հասաւ և բնակարան վարձողներին: Թամաշիլի և Մանթաշիլի քարավանատարներում դադարեցրել են վարձ տալը: Իսկ 9-րորդ քաղաքամասի բնակարան վարձողները վճռել են՝ մայիսի 1-ից տալ վարձագինի միայն 50%-ը:

«С. Пет. Вѣд.» լրագրերը հաղորդում է հետևեալ նորութիւնները Կովկասի մասին: Չէ ձեռնարկ արել լրագրը, որ իբր թէ Թիֆլիսի ազդեցականութեան նահանգական պարագլուխ իշխան Մելիքով շնանակվում է Թիֆլիսի նահանգապետ: Լուրերին նայելով, մտադրութիւն կայ երևանի և Գանձակի նահանգներից կազմել մի գեներալ-նահանգապետութիւն, գեներալ-նահանգապետ կը նշանակվի իշխան Զաքարիայի-Օրբելիանի: Վրաստանի եկզար-խութեան ծխական-եկեղեցական գաղութները տեսուչ Վստորգով քահանան չի վերադառնայ իր պաշտօնին:

Հոգեկան հիւանդները ապաստարանի կառավարիչը, զիմիով սանիտարական տեսչին, յայտնում է, որ մի քանի ամիս է ինչ հիւանդանոցը զրկված է ամբողջ օրը ջրով: Չուրը գալիս է միայն գիւղերից և այդ ժամանակ էլ ջրի պաշար են վերցնում ընտանեկան պիտոյքների համար: Տեղիները, շուրջ չեն լինելու պատճառով, հիւանդներին անկարելի է լինում վանանքի նստեցնել, իսկ գիւղերից կառավարիչը իր իրաւունքը չէ համարում ծառայողներին ստիպել աշխատելու:

Մայիսի 10-ից քաղաքային մի խանութներում հետևեալ գններ են նշանակված մի տեսակների վրա, սուկի ֆունտը 20 կ., I-ին տեսակ միսը 13 կ. ֆունտը, II-ը 12 կ. և III-ը 10 կ., ուղեղը հատը 15 կ., լեզու հատը 30 կ., սիրտը 20 կ., երկամուկը զոյգը 16 կ., զլիւն միսը ֆունտը 3 կ., երկամուկը ձար-

պը 15 կ. ֆունտը, 1/4 ֆ. կատիտի հատը 5 կ., բիֆշտեկա 3/4 ֆ. իւրաքանչիւր բաժինը 20 կ., տնտրիկոտ 3/4 ֆ. բաժինը 15 կ., շնիցի 3/8 ֆ. բաժինը 10 կ., մանրացրած միս տանց կողմնակի խառնուրդի ֆունտը 18 կ., ոչխարի միսը 13 կ. ֆունտը, դմակ 15 կ. ֆ., գոլակ հատը 11 կ.:

Քաղաքային առաջին ապաստարանում անցեալ ապրիլ ամսում գիւղերի են 3767 հոգի, որոնք ըստ ազգութեան բաժանված են հետևեալ կերպով. ռուսներ՝ 1657 տղամարդ և 186 կանայք, հայեր՝ 1220 տղ. և 4 կանայք, վրացիներ՝ 269 տղ. 30 կանայք, թուրքեր՝ 17 տղ., գերմանացիք՝ 60 տղ. և 1 կին, լեհեր՝ 150 տղ., և զանազան ազգութիւններից 73 տղ.: Ամենից շատ են այցելել մշակներ 1627 տղ., յետոյ զանազան ծառայողներ 432 տղ. և 156 կանայք, ապա գործին անընդունակներ 421 տղ. և 65 կանայք և այլն: Ապաստարանում գիւղերի են և 2 աշակերտ:

«Новости» լրագրերը հաղորդում է, որ նորերն ընկած է Կովկասի նախկին ադմիրալտարացիայի այն վճիռը, որով Նահապետ վարդապետ Նահապետեանին արգելված էր ապրել Կովկասի երկրի սահմաններում և մայրաքաղաքներում: Ամենայն Կայսր Կաթոլիկոսի հրամանով Նահապետ վարդապետը, որ ժամանակաւորապէս գտնվում է Պետերբուրգում, այս քանի օրերում կուղևորվի Էջմիածին:

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են. «Գանձակի գաւառի գիւղական շրջաններից մինը, որը բաղկացած է Բանանց, Փիւր, Սաշակապ, Կիրանց, Ներքին ու Վերին Բարհատ, Չովդառ, Միր-զիկ, Բարալուր, Ոսկանապատ ու Մուռուտ գիւղերից և որը յայտնի է Բանանցի համայնք անունով (БАНЯНСКАЯ ВОЛОСТЬ) ուղարկել է Կովկասի փոխարքային ու մինիստրներին կօմիտէտին մի խնդրագիր (պետիցիա), որի մէջ նկարագրված է գիւղական ժողովրդի իրաւադուրի գրութիւնը ու արված են որոշ պահանջներ, մեծ մասամբ ընդհանուր բնակչութիւն ունեցող»:

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Չը նայելով, որ խօրեան մեզ մօտ ամառը հիւր լինելու յաւակնութիւնը դուրս ունենայ, այնուամենայնիւ մեր տեղական պոլիցիան ամենայն վճռականութեամբ որոշել է չը խախտել չէզոքութիւնը, այլ լոկ հանդիսատեսի դեր կատարել: Կեղտոտութիւնն ամենուրեք թագաւորում է, մանաւանդ քաղաքի յետ ընկած թաղերում, Սակայն, ինչու ենք խօրեայի սարսափի մասին խօսում, քանի որ առողջապահութեան ամենատարրական պայմանները նոյն իսկ մեզանում ուսումնական են արված: Եթէ մի եւրօպացի այցելէր մեզ և գէթ մի անգամ բարձր ունենար տեսնելու մեր քաղաքի արտաքինները, նա զարհուրանքով յետ կը փախչէր, չը հաւատարկ, որ XX-րդ դարում կարող է նրան մի այդպիսի գարշելի տեսարան պատկերանայ»:

ՆՈՐ-ՆԱՄԻՋԻՆԻՍՏԱՆ մեզ գրում են. «Երկու օր գործադուլ անելուց յետոյ, մայիսի 4-ից հաջադործները սկսեցին աշխատել, իրանց պահանջներին բաւարարութիւն ստանալուց յետոյ: Մայիսի 4-ին ժամի 11-ից գործադուլ են արել Վաղեիկավազի երկաթուղու արհեստանոցի վարպետներն ու բանուորները: Կառավարիչը խոստացել է պահանջներին մի մասին բաւարարութիւն տալ, միւս մասի համար ընկերութեան կարգադրութեան սպասել: Բանուորները մայիսեան գործադուլը չը կատարվեց, որը երկար ժամանակ է զբաղեցնում էր մտքերը»:

«ՄՇԱՎԻ» ՀԵՌԱԳԻՆՆԵՐԸ

ՈՒՌՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՑ

10 մայիսի
ԲԵԼԳՐԱԴ, 10 մայիսի: Երեկվան ձայնաուսութիւնից և սկուլպչինայի նախագահ ընտրելուց յետոյ կառավարութիւնը հրաժարական տուեց, որ դեռ և չէ ընդունված: Մինիստրների խորհրդի նախագահ Պաշիչ առանձին նամակով տեղեկացրեց այդ մասին սկուլպչինայի նախագահին: Երեսօրէն ընդհատված են մինչև ձգնաժամի լուծումը: Թագաւորն սկսեց խորհրդակցել կուսակցութիւնների պարագլուխներին հետ: Ներկայումս կառավարութիւնը պահանջում է պատգամաւորների ժողովի

լուծումը. հակառակ դէպքում կարենէտը պընդում է հրաժարականի վրա:

ՍՕՖԻՆ: Պաշտօնական «Новый Вѣст» լրագիրը պահանջում է Մակեդոնիայի համար միջազգային յանձնաժողովի կազմում, որը պէտք է յատուկ նպատակ ունենայ ստուգել ոչ միայն Ֆինանսները, այլ և վարչական և իրաւաբանական բնակչութիւնն ունեցող գործերը մակեդոնական վիլայէտներում: Երէկ կայացաւ քաղաքական երկաթուղիների ներկայացուցիչների կօնգրէսի բացումը: Ներկայ էին 260 մարդ: Կլիստուրա քաղաքը, որտեղ ծնվել է Դանիլ, որոշեց նրա բրօնզեայ կիսարձանը դնել: ՊԱՐԻՉ, 10 մայիսի: Մինիստրների խորհրդի մէջ, Լուբէի նախագահութեամբ, Դիւկասէ յայտնեց, որ Բուլղարիա առաջիկայ գօրադրելին կուղարկէ յատուկ միսիսիս: Ներկայումս Մայգօնում գտնվում են 16 փոխադրանաւոր: Պրիսկ Սերսուգովա կը մնայ Եւրօպայում մինչև պատերազմի վերջը և նշանաւոր դեր կը խաղա խաղաղութեան բանակցութիւնների մէջ: Նա բերեց միկադօի ինքնագիր նամակը Էդուարդ Թագաւորի համար: ՎԱՇԻՆԴՏՕՆ, 9 մայիսի: Կալիֆօրնիայի բնակիչները բողոքում են եւրօպացիների գաղթականութեան դէմ և պահանջում են դուրս բերել նրանց: ՎԱՇԻՆԴՏՕՆ, 9 մայիսի: Այն հաղորդագրութեան առիթով, թէ Բօթէսովէսիին կը բռնէ ածուխ Լիւզօնի մօտ, ամէրիկական կառավարութիւնը որոշեց, որ ռուսներին թոյլ կը տրվի վերցնել բաւական քանակութեամբ ածուխ մինչև Վաղեիկավազի հասնելու համար, բայց ոչ աւելի:

ՎԻԵՆՆԱ, 10 մայիսի: Բերլինի դաշնագիրը ստորագրող պետութիւնները որոշեցին ներկայացնել Աթէնք հաւաքական յայտագիր, որը պարունակում է եռանդուն նախադրույցով միտաստանելու յունական կառավարութեան ցոյց տուած օժանդակութեան առիթով չէտաներին հարաւային Մակեդոնիայում: ԼՈՆԴՈՆ, 10 մայիսի: Դատարան են կանչված ռուսներին կեղծ անցագրերին հայթայթելու համար մեղադրվող Ժուրնալիստ Բրէլ-Փօրը և զերասան Մակ-Կուլլօլ: Մեղադրական ակտի մէջ ասված է, որ վերոյիշեալ անձինք դաւադրութիւն սարքեցին կեղծ անցագրերի ձեռք բերելու նպատակով ուրիշ անձանց համար, որ սպառնում է խաղաղ յարաբերութիւններին Անգլիայի և Ռուսաստանի միջև:

11 մայիսի
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Մայիսի 10-ին առաւօտեան 9 ժամին վախճանվեց Մեծ Դշխան Կոստանտին Կոստանտինովիչը: Դուստրը Իշխանու ի Եւստալիս Կոստանտինովիչն է: ՏՕԿԻՐ, 10 մայիսի: Պաշտօնական զեկուցումը հաստատում է, որ ռուսական հեծեալ գօրաբաժինը, առաջ շարժվելով Ֆակուսիին ուղղութեամբ, բանակ դրեց 20 մղոն հեռավորութեամբ Ֆակուսիինից Սինմիտինի ձախապարհի վրա: Մայիսի 7-ին գօրաբաժինը վերադարձաւ Մատիէնիսիէ աջ ափի վրա, բայց մի քանի էսկադրօններ մնացին ձախ ափի վրա: Եւրօպական գօրաբաժինը յարձակում գործեց նրանց վրա, որի պատճառով նրանք հեռացան դէպի հիւսիս: Ձեռքած բաներում զրուկները անփութիւն է:

ԼՈՆԴՈՆ, 10 մայիսի: Դատաստանական բնութեան ժամանակ յար Կարսոն, ընդհանուր պոլիսորը, հաւաստեց, որ անցագրերը տուել է արտաքին գործերի մինիստրութիւնը Մակ-Կուլլօլի անունով, այնպէս որ հէջ իրան անցագրի վրա կար Մակ-Կուլլօլի ստորագրութիւնը, որը նման էր Մակ-Կուլլօլի իսկական ստորագրութեան: Հէջ այդ անցագրերը գտնվեց «Բրիտու» հիւրանոցում տեղի ունեցած պայթիւնի զոհի դիակի վրա Պետերբուրգում: Բրէլսթօքք գրաւոր յայտնեց ոստիկանութեան, որ անցագրին ստացաւ յեղափոխական կուսակցութեան անդամներից մէկի համար, բայց համաձայնեց այդ բանին այն պայմանով, որ այդ քոկուսիստից օգուտ կը բերէր միայն խաղաղ պրօպագանդայի նպատակներով:

ՏՕԿԻՐ, 10 մայիսի: (Լօնդօնի վրայով): Ցուցմունքներ կան, որ էսկադրան դուրս է եկել Սօպոլ ուղիղաձիգի բաց շրջից: ՊԱՐԻՉ, 9 մայիսի: Նաչէվիչի նորերս Բօլգարիա գիւղը և նրա տեսակցութիւնը իշխան Ֆիւրդինաուդի հետ նպատակ լուծել նոր համաձայնութիւն կայացնել Թիւրքիայի և Բուլգարիայի միջև:

ԼՈՆԴՈՆ, 10 մայիսի: Մակ-Կուլլօլի և Բրէլ-Փօրի գործի դատաստանական բնութիւնը յետաձգված է երկու շաբաթով: ԲԵԼԴՆ: Մեծանում է այն կարծիքը կող-

մակերեսների թիւը, թէ շատ կարելի է Տօքօի համար ցանկալի է երևում թողնել, որ ռուսական էսկադրան մտնէ Վաղեիկավազ, ի նկատի ունենալով, որ այն ժամանակ ակամանաւորի մեծ թիւով աւելի լաւ շանսեր կունենայ գործողութիւնների աշղուղեթեան համար:

11 մայիսի
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Նշանակված են Վարչապայի օրէն-պոլիցիայէրի պաշտօնակատար գնդապետ բարոն Նօլկէն ներքին գործերի մինիստրի արամաւորութեան տակ ժաղաղամեքի շէֆի կոչումով:

Նշանակված է Կովկասի քաղաքացիական մասի կառավարչապետի դեւանատան գերեզման գնեւրալ-մայօր Տրօֆիմով Չէրոսօբեան նահանգապետ:

ԲԱՊՈՒ, 10 մայիսի: Շահը Աստարա չէր ժամանէ մայիսի 14-ին: Դիւմաւորը համար Բագու ժամանեց Կ. Պօլսի պարսկական դեսպանը: Վաղը սպասվում է Պետերբուրգի դեսպանը:

ՍԵՂԷՅ, 11 մայիսի: Գիւղերվայ 12 ժամին ժողովարանի վերանայում մի անյայտ անձ ուսմը դրեց ոստիկանապետ Շեդէրի վրա, որ նրան 24 վէրը պատճառեց: Թիւրք վերաւորված են ժողովարանի խոհարարը և ծառան և ուրիշները: Վերանդան այլաբանված է: Շրջակայ տներում դուրս են ընկել ապակիները:

ԲԵԼԳՐԱԴ, 10 մայիսի: Չգնաժամը շաբաթուկում է: Թագաւորը խորհրդակցում է զանազան կուսակցութիւնների քաղաքական գործիչներին հետ: Պալատական շրջանները խորհուրդ են տալիս կազմել գործունեայ մինիստրութիւն: Թագաւորը հակվում է անկախների կողմը, բայց կարծում են, որ դժուարութիւններից խուսափելու համար, նա Պաշիչին կը թողնէ մինիստր-նախագահ, թոյլատրելով նրան արձակել սկուլպչինան և նոր ընտրութիւններ նշանակել:

ԳՈՒՆԶՈՒՄԻՆ, 9 մայիսի: Մեր գօրաբաժինների յարձակման շնորհիւ եւրօպացիները մաքրեցին Նանչնգի գիւղը և Չանտաֆու կալարանը:

ԱԼԱՏԻՐ, 10 մայիսի: Անգլիան հրդեհը լաւից քաղաքի լաւագոյն մասը: Այրվեցին հօգուտ դպրոցը, պօստ-հեռագրական գրասենեակը, դեղատունը, առեւտրական շաքերը, բոլոր մաքաղիները և մինչև 240 տուն: Վերանալված է տաճարը: Վաստը մինչև մէկ միլիոն բուրլէ: Բագալը աւերակների է փոխարկվել: Թշուառութիւնը սարսափելի է: Անհրաժեշտ է հասարակական օգնութիւնը: Նուրաուսութիւնները կարելի է ուղարկել քաղաքապետի անունով:

ՏՕԿԻՐ, 10 մայիսի: Հաշուում են, որ Լինէ-վիչի բանակը քաղկացած է պատերազմելու ընդունակ 300,000 մարդուց: Զինուորական երկաթուղին Գիւրիցի դէպի Կուսանչնգի աւաւարով է և երկաթուղիի հետ կառուցանում դէպի հարաւ մթերքներ փոխադրելու համար: Եւրօպացիները վերականգնեցին երկաթուղիական հաղորդակցութիւնը Մուկլէնի և Դալնի միջև: Եւրօպական բանակը օժանդակ գործեր ստացաւ: Նրա թիւը նոյնքան է, որքան մուկլէնեան ձախաւորմանից առաջ: Ռուսները գործունէութիւն են ցոյց տալիս մօնգօլական սահմանի վրա, նոյնպէս և Սին-մինտինի ուղղութեամբ: Երկու շաբաթանակը հաղորդում են, որ Բաշի ջրանցքում տեսան ռուսական չորս փոխադրանաւոր, որոնք անթիւ հեռագրի ունէին: Վուսունի հրամանատար չինական ծովապետը, որը ունի երկու կրէյսերի և երեք ակամանաւորից բաղկացած էսկադրա, հրաման ստացաւ հսկել Շանգ-հայում գիւնաթափ արված ռուսական պատերազմական նաւերի վրա: Ամէրիկական էսկադրան Մանիլայում ուժեղացրվեց երկու զրահակրով և երկու մարտանաւով: Շրտանալական էսկադրան բաժանված է երկու նաւախմբի: մէկը գտնվում է Ալոնգ ծովախորշում, իսկ միւսը Մայգօնում: Գիւրմանական էսկադրան ամբողջապէս կենտրոնացած է Ցիւնդուօում:

ԼՈՆԴՈՆ, 10 մայիսի: Ռուս կառավարութիւնը ածուխի անգլիան պատուէր է տուել, 100,000 տօնից աւելի: հարաւային Վալլիսի մի քանի ածխահանքերին: Ածուխը պէտք է շուտափոյթ ուղարկվի Վաղեիկավազ: Այսօր Լօնդօնում շոգեհաւերի մեծ պահանջ կայ: Ապահովագրողները ապահովագրութեան համար անչափ մեծ պէմանք են պահանջում: Շատ կարելի է ուսաց կառավարութիւնը կը վերացնէ դժուարութիւնները, համաձայնվելով վարձատրել նաւատերերին, եթէ եւրօպացիները բռնեն նրանց: Ածուխը ռուսաց կառա-

Доводено цензурою. Тифлиси, 11-го мая 1905 г. Տպարան «ՀԵՐՄԵՍ» րճկ. Электротпечатня типографского Т—ва „Гермесъ“. Мад. ул. № 15.